

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՒՐՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԵՎ
ՏՈՒՐԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
հասարակական կազմակերպության
անդամների 15.06.2018թ
հիմնադիր ժողովի որոշմամբ

նԱԽԱԳԱՀ՝

Կարինե Դավոյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«-----» «-----» 2018թ.

գրանցման թիվ

Հարկ վճարողի հաշվառման համար

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՒՐՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԵՎ
ՏՈՒՐԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

2018թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՒՐՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՐԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ստեղծվել է իր անդամների համատեղ գործունեությունը կանոնակարգելու, նրանց ընդհանուր շահերը պաշտպանելու և ներկայացնելու նպատակով և ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.3. Կազմակերպությունը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, 0070 Վարդանանց փ. 28շ. Բն. 47, [հեռախոս՝ 099558358](tel:099558358), էլ. [hauցե՝ davkarine55@gmail.com](mailto:davkarine55@gmail.com):

1.6. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՒՐՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՐԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» հասարակական կազմակերպություն:

1.7. Կազմակերպության հայերեն հապավումն է՝ «ՀՏՏԱ» ՀԿ:

1.8. Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է՝ Общественная организация «АССОЦИАЦИЯ ТУРОПЕРАТОРОВ И ТУРАГЕНТОВ АРМЕНИИ»:

1.9. Կազմակերպության ռուսերեն հապավումն է՝ ОО «АТТА»:

1.10. Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է՝ «ASSOCIATION OF ARMENIAN TOUR OPERATORS AND TOUR AGENTS» Non-Governmental Organization:

1.11 Կազմակերպության անգլերեն հապավումն է՝ «AATT» NGO:

1.12. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան է՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.1.1 Կազմակերպության անդամների գործունեության համակարգումը, նրանց իրավունքների և ընդհանուր օրինական շահերի ներկայացումն ու պաշտպանությունը,

2.1.2. Հայաստանում զբոսաշրջության կայուն զարգացմանը նպաստելը,

2.1.3. զբոսաշրջության էթիկայի կանոնների ճանաչմանն ու պահպանությանը նպաստելը,

2.1.4. զբոսաշրջության ոլորտի մասնագետների վերապատրաստման և ուսուցման կազմակերպումը, ընդ որում Կազմակերպության անդամների աշխատակիցների համար՝ արտոնյալ պայմաններով,

2.1.5. ուսումնասիրությունների, վերլուծությունների իրականացում, զբոսաշրջության ոլորտում (ներգնա և արտագնա) առկա խնդիրների բացահայտում և դրանց լուծման վերաբերյալ իրավասու մարմիններին համապատասխան առաջարկությունների ներկայացումը,

2.1.6. համագործակցությունը պետական, հասարակական և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի հետ,

2.1.7. տվյալների բազայի ձևավորումը, Կազմակերպության անդամների ներկայացումը և խթանումը ներքին ու միջազգային շուկայում, այդ թվում ինտերնետային կայքի միջոցով,

2.1.8. զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, նմանատիպ միջոցառումներին մասնակցություն,

2.1.9. միջոցառումների կազմակերպում, որոնք կնպաստեն Կազմակերպության անդամների գործունեության զարգացմանը:

2.2. Կազմակերպության նպատակներն են՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.2.1. իր և իր անդամների իրավունքներն ու ընդհանուր օրինական շահերը պետական, մասնավոր կամ միջազգային կազմակերպություններում, դատարաններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներկայացնելը և պաշտպանելը,

2.2.2. Կազմակերպության անդամների միջև համագործակցության ապահովումը,

2.2.3. լավագույն փորձի (այդ թվում միջազգային) ուսումնասիրությունը և Հայաստանում ներդրմանն աջակցելը,

2.2.4. Կազմակերպության անդամների կողմից ձևավորված արդյունքը ներքին և միջազգային զբոսաշրջային շուկայում խթանելը,

2.2.5. զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը աջակցելը,

2.2.6. զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացմանը, ոլորտը բարձրակարգ կադրերով ապահովմանը նպաստելը,

2.2.7. Կազմակերպության անդամներին խորհրդատվական ծառայությունների մատուցումը,

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ, ինչպես նաև իրավաբանական անձ, որի գործունեությունը որևէ կերպ առնչվում է զբոսաշրջության ոլորտի հետ և որը ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը՝ վճարելով սահմանված անդամավճարները:

3.2. Ամսական անդամավճարը սահմանվում է կայուն դրամական գումարով, ՀՀ դրամով, որը անդամները պարտավոր են վճարել մինչև հաշվետու ամսվա 15-ը: Անդամավճարի չափը սահմանում է ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով) և կարող է փոփոխվել Կազմակերպության ժողովի որոշմամբ:

3.3. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ նախագահին, ով դիմումը ներկայացնում է Խորհրդի քննարկմանը՝ Խորհրդի առաջիկա նիստին: Իրավաբանական անձի դեպքում՝ անդամակցության դիմումը ներկայացնում է նրա գործադիր մարմնի ղեկավարը՝ համապատասխան իրավասու մարմնի որոշման համաձայն:

3.4. Կազմակերպության նոր անդամի ընդունումը կատարվում է Խորհրդի որոշմամբ:

3.5. Խորհուրդը Կազմակերպությանն անդամակցելու դիմումը բավարարելու կամ մերժելու մասին որոշումը ընդունում է սույն կանոնադրությանը համապատասխան՝ դիմումը ներկայացվելուց հետո, ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

3.6. Խորհրդի կողմից անդամակցության վերաբերյալ որոշման կայացման մասին գրավոր տեղեկությունը ստանալուց հետո դիմողը 15 օրվա ընթացքում պարտավոր է կատարել Կազմակերպությանը անդամության տվյալ ամսական վճարը:

3.7. Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Խորհրդի որոշմամբ:

3.8. Կազմակերպության անդամության համար կարող են դիմել նաև այլ իրավաբանական անձինք որոնք ընդունում են Կազմակերպության կանոնադրությունը և իրենց գործունեության ընթացքում չեն իրականացրել ՀՀ օրենքներին հակասող գործունեություն:

- 3.9. Կազմակերպությունը կարող է մերժել անդամության դիմումը, եթե վերջինս՝
- 3.9.1. նախկինում եղել է Կազմակերպության անդամ ու Ընդհանուր ժողովի որոշմամբ զրկվել է անդամությունից, կամ
- 3.9.2. դուրս է եկել անդամությունից՝ թույլ տալով անդամավճարի վճարման կետանց, կամ,
- 3.9.3. չհանդիսանալով Կազմակերպության անդամ՝ իրականացրել է այնպիսի գործողություններ, որոնք հակասում են ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության Զբոսաշրջության Էթիկայի Համաշխարհային Կանոնագրքին և/կամ Կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված Զբոսաշրջության Էթիկայի պահանջներին, կամ վտանգում և/կամ վնասում են Կազմակերպության կամ դրա անդամների հեղինակությունը կամ բարի համբավը կամ իրավունքները կամ համաշխարհային շուկայում Հայաստանի նկարագիրը՝ որպես գրավիչ և բարենպաստ զբոսաշրջային երկիր, կամ այլապես իրականացրել է Կազմակերպության կանոնադրությանը հակասող գործունեություն:
- 3.10. Կազմակերպության անդամը կարող է օգտագործել Կազմակերպության Խորհրդանիշը՝ ներկայացուցչական, տեղեկատվական և գովազդային նպատակներով, այդ թվում նաև՝ համաժողովների, աշխատաժողովների, ցուցահանդեսների, տոնավաճառների ընթացքում:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
- 4.1.1. ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում,
- 4.1.2. ներկա գտնվել Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով,
- 4.1.3. ցանկացած դեպքում անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից,
- 4.1.4. ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,
- 4.1.5. վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,
- 4.1.6. Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների,

որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,

4.1.7. իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

4.2. Կազմակերպության անդամը **պարտավոր է՝**

4.2.1. կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

4.2.2. բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

4.2.3. սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետում վճարել անդամավճարները:

4.2.4. պահպանել Կազմակերպության կանոնադրությունը, ներքին կանոնակարգը, ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության Զբոսաշրջության Էթիկայի Համաշխարհային Կանոնագրքի և Կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված Զբոսաշրջության Էթիկայի պահանջները,

4.2.5. Կազմակերպության անդամների Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, ժամկետներում և չափերով կատարել նպատակային ներդրումներ այն նախագծերի իրականացման համար, որոնց իրականացումը տվյալ պահի դրությամբ կարևոր կհամարի կազմակերպության անդամը: Նպատակային ներդրում իրականացնելուց հրաժարվելը կնշանակի տվյալ անդամի մասնակցության բացառում ներդրումային նախագծին՝ ցանկացած ձևով: Մինևս սահմանակց անդամի կողմից որևէ նախագծի կամ նախաձեռնության համար իրականացված ներդրումը նրան հնարավորություն կտա մասնակցել նախագծին և նրա կազմակերպման և իրականացման փուլերին:

4.2.6. Կազմակերպությանը տրամադրել, իրավաբանական անձի դեպքում՝ հետևյալ տեղեկատվությունը՝ Ընկերության խորհրդանիշ, ապրանքային նշան, գործունեության տեսակ, և այլն:

4.2.7 չհրապարակել գաղտնի տեղեկություններ Կազմակերպության գործունեության վերաբերյալ,

4.2.8. զբոսաշրջության ոլորտում իր գործունեության ընթացքում պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները,

4.2.9. պահպանել Կազմակերպության բարի համբավը:

4.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի նկատմամբ Կազմակերպության Ընդհանուր ժողովի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 5.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են Ժողովը, Խորհուրդը և գործադիր մարմինը՝ նախագահը:
- 5.2. Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմինին՝ Ժողովին:
- 5.3. Կազմակերպության Ժողովը գումարվում է հինգ տարին մեկ: Կազմակերպության հերթական Ժողովը հրավիրում է նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է Ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 10 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:
- 5.4. Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է Խորհրդի, նախագահի կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Խորհրդի կամ նախագահի կողմից:
- 5.5. Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:
- 5.6. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝
- 5.6.1. Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
- 5.6.2. այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,
- 5.6.3. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,
- 5.6.4. Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,
- 5.6.5. Կազմակերպության Խորհրդի անդամների ընտրությունը և փոփոխումը,
- 5.6.6. Կազմակերպության նախագահի ընտրությունը և փոփոխումը,
- 5.6.7. Կազմակերպության նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,
- 5.6.8. Կազմակերպության անդամավճարների չափի ու վճարման կարգի ու պայմանների մասին որոշման ընդունումը,
- 5.6.9. նպատակային վճարումների մասին որոշման ընդունումը,

5.6.10 Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

5.6.11. Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը կնախատեսի ունենալ ռազմավարություն,

5.6.12. Տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,

5.6.13. Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,

5.6.14. Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

5.6.15. Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,

5.6.16. օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

5.7. Ժողովն իրավագոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության քվեարկելու իրավունք ունեցող բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են Ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

5.8. Ժողովին քվեարկության իրավունքով մասնակցում են Կազմակերպության անդամները, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ ներկայացուցիչները (տնօրեն կամ լիազորված անձ)՝ մեկ անդամ մեկ ձայն սկզբունքով:

6. Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է **Կազմակերպության խորհուրդը** (այսուհետ՝ Խորհուրդ):

6.1. Խորհրդի անդամները ընտրվում են Ժողովի կողմից՝ կումուլյատիվ սկզբունքով, 5 (հինգ) տարի ժամկետով, անդամ ֆիզիկական անձանցից, իսկ իրավաբանական անձի դեպքում ընկերությունների լիազորված անձանցից՝ ոչ ավելի քան 7 հոգի:

6. 2. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

6.2.1. Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

6.2.2. Կազմակերպության անդամների տարեկան և արտահերթ Ժողովների գումարումը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

6. 2. 3. Ժողովի գումարումը և օրակարգի հաստատումը,

6. 2. 4. Կազմակերպության վարչակազմակերպչական կառուցվածքի հաստատումը,

6. 2. 5. Կազմակերպության նոր անդամների ընդունման մասին որոշման ընդունումը,

6. 2. 6. ֆինանսական պլանի հաստատումը, նրանում փոփոխությունների կատարումը,

6. 2. 7. Անհրաժեշտության դեպքում Խորհրդին կից խորհրդակցական մարմինների ձևավորումը և դրանց աշխատակարգերի հաստատումը,

6.2. 8. Կազմակերպության դեմ դատական գործընթացներում Կազմակերպությունը ներկայացնելու մասին որոշման ընդունումը:

6. 2. 9. Օրենքով և սույն կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

6.3. Խորհուրդն իրավագոր է, եթե գումարվել է Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան և Խորհրդին նիստին մասնակցում են Խորհրդի բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

6.4. Խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկելու իրավունք ունեցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

6. 5. Խորհրդի նիստերի նախագահողը ի պաշտոնե Կազմակերպության նախագահն է, ով մասնակցում է առանց քվեարկելու իրավունքի: Խորհրդի նիստերին կարող են մասնակցել հրավիրված անձինք:

6.6. Խորհրդի նիստերը բաց են Կազմակերպության բոլոր անդամների համար:

6.7. Խորհրդի որոշումները հաստատվում են նիստին մասնակցող բոլոր անդամների ստորագրություններով:

7. Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության **նախագահն** է, ով ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամկետով, հետագայում վերընտրվելու իրավունքով: Նախագահը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը:

7.1. Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

7.2. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը, Ժողովի և Խորհրդի որոշումներին համապատասխան`

7.2.1. ապահովում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,

7.2.2. մինչև 50,000 (հիսուն հազար) դրամ արժողությամբ ցանկացած գույք միանձնյա, իսկ 50,000 (հիսուն հազար) դրամից ավելի արժողությամբ ցանկացած գույքի դեպքում Ժողովի հետ համաձայնեցնելով տնօրինում և կառավարում է Կազմակերպության գույքը, այդ թվում` ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

7.2.3. ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

7.2.4. տալիս է լիազորագրեր,

7.2.5. Հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը, ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանները,

7.2.6. Հաստատում է ամենամյա ծախսերի նախահաշիվը,

7.2.7. բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

7.2.8. Ղեկավարում է աշխատակազմի գործունեությունը, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

7.2.9. հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

7.2.10. հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

7.2.11. իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

7.3. Նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

7.4. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

8.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

8.3. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) կազմակերպության անդամների ներդրումները,

2) Կազմակերպության անդամների վճարումները (անդամավճարները),

3) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

4) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,

- 5) դրամական մուտքերը պետական բյուջեից,
- 6) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
- 7) հանգանակությունները,
- 8) օրենքով չարգելած այլ միջոցներ:

8.4. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

9. 1. Պետությունն օրենքով սահմանված կարգով ապահովում է կազմակերպության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

9. 2. Կազմակերպությունը իր կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող է պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական ծրագրերին և այլ միջոցառումների:

9. 3. Պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց արգելվում է միջամտել կամ խոչընդոտել Կազմակերպության օրինական գործունեությանը:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

10.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

10.2. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

10.3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

11.1. Կազմակերպությունը կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններին և ունենալ միջազգային այլ կապեր:

11.2. Կազմակերպությունը կարող է այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Սույն կանոնադրությունը կազմված է 15.06.2018թ. և բաղկացած է -12- թերթից: